
ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՅԵՐԻ
ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ

ՄՇԵՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Միջին հայերենի փոխառությունների շարքում առավել մեծ թիվ են կազմում արաբերեն բառերը¹: Այս տեսանկյունից բացառություն չեն նաև հայրեններն ու կաֆաները, որոնք, լինելով ժողովրդական, գուսանաժողովրդական, մասամբ էլ հեղինակային ստեղծագործություններ, միջին հայերենի ժողովրդախոսակցական լեզվի անմիջական արտահայտություններն են²: Հայրենների և կաֆաների բառապաշարում առանձնանում են արաբական փոխառություններով կազմված բայերը³, որոնք իրենց թվաքանակով և հաճախադեպությամբ զիջում են միայն արաբերենից փոխառյալ գոյականներին: Դա բնական է, քանի որ առանց բայ խոսքի մասի հնարավոր չէ մեզ շրջապատող իրերի և երևույթների, այլև վերջիններիս հետ կապված հանգամանքների և հատկանիշների շուրջ հաղորդակցումը: Ավելին, հաղորդակցման միավորների մեջ բայը կատարում է ոչ միայն պարտադիր անդամներից մեկի՝ ստորոգյալի դերը, այլև հնարավորություն ունի հանդես գալու քերականական այլևայլ գործառնություններով, որ նա ձեռք է բերում շնորհիվ դերբայների և վերջիններիս թեք ձևերի:

Ճիշտ է, XIX–XX դարերում միջին հայերենում տեղ գտած արաբական փոխառությունների թեմային մասնակիորեն անդրադարձել են տասնյակ լեզվաբաններ, սակայն միջին հայերենի բայի և խոնարհման համակարգի առաջին ծավալուն ուսումնասիրության հեղինակը Ս. Անթոսյանն է⁴:

Ստորև ուսումնասիրելու ենք հայրեններում ու կաֆաներում գործածված այն բայերի արտահայտության և բովանդակության պլանները, որոնք կազմվել են արաբական փոխառությունների հենքի վրա և առայսօր առանձին քննության նյութ չեն դարձել:

Ընդունված է այն կարծիքը, ըստ որի՝ բառապաշարի հարստացումը կատարվում է երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին⁵: Դրանցից առաջինը

¹ Տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 48:

² Տե՛ս Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայրեններ, Երևան, 1994, էջ 9, շ. Ս ի մ ո ն յ ա ն. Հայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975, էջ 7:

³ Պայմանականորեն մենք այդ բայերն անվանում ենք արաբերենից փոխառյալ բայեր, իրականում դրանք արաբերեն և հայերեն բառակազմական միջոցների կիրառությամբ ձևավորված կազմություններ են:

⁴ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972 (այսուհետ՝ Ակնարկներ..., հ. Ա):

⁵ Տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Է. Բ. Ա դ ա յ ա ն, Վ. Դ. Ա ո ա ք ե լ յ ա ն, Վ. Ա. Ք ո ս յ ա ն. Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 329:

լեզվի զարգացման տվյալ ժամանակահատվածին հատուկ ներքին հնարավորություններով նոր բառեր կազմելն է⁶ կամ նախորդ շրջան(ներ)ում ու բարբառներում առկա բառերը շրջանառության մեջ դնելը, իսկ արտաքին ճանապարհի դեպքում որևէ լեզու այլ լեզուներից փոխառում է բառեր⁷՝ առանց դրանք բառակազմորեն փոփոխելու:

Սակայն բազմաթիվ փոխառությունների բառակազմական քննությունը ցույց է տալիս, որ բառապաշարի հարստացման ներքին և արտաքին ճանապարհներից բացի՝ գոյություն ունի երրորդ՝ խառը ճանապարհը, երբ փոխատու և փոխառու լեզուների բառակազմական միջոցների համադրումով կամ հարադրումով ձևավորվում են բառային նոր միավորներ: Այսպես՝ միջին հայերենում, արաբերենից անփոփոխ կատարված փոխառություններից բացի, տեղ են գտել նաև իրենց կազմության մեջ հայերեն բառակազմական տարրեր պարունակող փոխառություններ⁸: Օրինակ՝ խալիս («մաքուր», «ազատ», «զերծ») փոխառության և բնիկ -ել բայակերտ ածանցի համադրումով միջին հայերենում բառաձանցման ճանապարհով ձևավորվել է խալ(ը)սել («մաքր(վ)ել», «ազատ(վ)ել») բայը, հարամ («անարդար», «աղտոտ», «պիղծ») փոխառության և բնիկ առնել բայի հարադրումով (բառաբարդում)՝ հարամ առնել («պղծել», «աղտոտել») վերլուծական բայը և այլն⁹:

Խնդայ՝ թէ խալսեցայ և այլ մի խօսիլ (ՊՎՄԱ, 102, 267-268):

Ըզբունըս հարամ առնես, արթնութիւն տասս ձանձրալի (ՊԱՄ, 255):

Թե՛ բառաձանցման և թե՛ բառաբարդման ճանապարհներով ձևավորված փոխառյալ բայերը կազմությամբ լինում են միայն պարզ ածանցավոր կամ բարդ ածանցավոր: Հմնտ.՝ դառնիլ («սուզվել»), դբլել («ընդունել») և դառիս լինիլ, դապուլ անել, համապատասխանաբար, պարզ ածանցավոր և բարդ ածանցավոր համանիշ բայերը¹⁰, որոնց բոլորի կազմության մեջ պարտադիր տեղ ունի միջին հայերենի բայակերտ ածանցներից մեկը կամ հայերեն որևէ բայ, որն ինքնին կազմությամբ ածանցավոր է:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Բայակազմության մասին առանձին դիտարկումներ ունեն Լ. Հովհաննիսյանը (տե՛ս Լ. Շ. Հովհաննիսյան. XVII դարի գրաբարը.՝ «Լեզվի և ոճի հարցեր», VII, Երևան, 1983, էջ 157), Ռ. Ղազարյանը (տե՛ս Ռ. Ս. Ղազարյան. Լեզվաբանական ուսումնասիրություններ, Երևան, 2010, էջ 140), Ն. Հովհաննիսյանը (տե՛ս Ն. Գ. Հովհաննիսյան. Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն.՝ Հայոց լեզվի պատմության հարցեր, III, Երևան, 1991, էջ 103-113) և ուրիշներ:

⁹ Հայրեններում և կաֆաներում տեղ գտած լեզվական նյութը քաղել ենք հետևյալ աշխատություններից՝ Ա. Մնացականյան. Հայրեններ, Երևան, 1986 [այսուհետև հայրեններից բերվող լեզվական նյութին կհետևեն միայն նշված աշխատության համապատասխան էջը և տող(եր)ը], Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ (այսուհետև՝ ՊԱՄ), Երևան, 1989, Արմենուհի Սրբապյան. Պատմութիւն վասն մանկանն և աղջկանն (այսուհետև՝ ՊՎՄԱ), Երևան, 1983:

¹⁰ Ա. Ղազարյանը միանգամայն ճիշտ է նկատում, որ հայերենի զարգացման բոլոր շրջաններում, այդ թվում նաև միջին հայերենում, բառակազմության հիմնական եղանակը բառաբարդությունն է (տե՛ս Ա. Ղազարյան. Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 279):

Խառը ճանապարհով ձևավորվող բայերը հայրեններում և կաֆաներում արտահայտվում են հետևյալ մասնակաղապարներով.

1. Փոխառյալ հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ¹¹, *ինչպես*՝ ընովկիլ («խռովել»), թապտիլ («թավալվել»), թարկել («թողնել»), խալըսել («մաքր(վ)ել», «ազատ(վ)ել»), դալտել («սխալվել»), մալուլել/մելիլիլ («տխրել»), մլքել («գրավել») և այլն: Օրինակ՝

Թէ հետ Ֆալաքին սագիս՝

Հոովկիս թէ թաց, նա յ թէ չոր (845, 57-58) և այլն:

Հարկ է նշել, որ բերված մասնակաղապարը միջին հայերենում բառապաշարի հարստացման ամենարդյունավետ միջոցն է, քանի որ այս ձևով կերտվել են ոչ միայն բայեր, այլև բազմաթիվ գոյականներ ու ածականներ: Հմմտ., օրինակ, դարիպ+անալ, դարիպ+ուրիս, դարիպ+ուլ ածանցավոր նորակազմությունները:

2. Փոխառյալ հիմնական ձևույթ - հայերեն հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ, *ինչպես*՝ թաքեայ զարկել («ապավինել»), մասխարայ դնել («ծաղրել») և այլն: Օրինակ՝

Նա զնա մասխարայ դնէ,

Թքանէ զէտ դիմաճիք (333, 767-768):

3. Փոխառյալ հիմնական ձևույթ - փոխառյալ հիմնական ձևույթ - հայերեն հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ, *ինչպես*՝ դավլ ու ըխրար անել («խուտանալ», «ուխտել»): Օրինակ՝

Քանց դավլ ու ըխրար արիր,

Թէ՛ Սիրէ՛, Տէրն ըզքեզ պահէ (54, 43 - 44):

4. Փոխառյալ հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ - հայերեն հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ, *ինչպես*՝ թարկիլ տալ («թողնել»).

Ով քեզի ծանօթ եղեր՝

Զարևուն թարկիկն է տվեր (109, 31-32):

Ինչպես վկայում են բերված օրինակները, հայրեններում և կաֆաներում գործածված բայերի շարքում տեղ են գտել արաբերենից կատարված փոխառությունների մասնակցությամբ ձևավորված թե՛ համադրական¹² և

¹¹ Տվյալ դեպքում նկատի ունենք բայակերտ ածանցները և բայածանցները: Մասնակաղապարների մեջ հանդիպող + նշանը ցույց է տալիս բաղադրիչների համադրություն, իսկ – նշանը՝ հարադրություն:

¹² Համադրական և վերլուծական եզրերով սովորաբար բնութագրվում են բարդ կազմությունները: Մենք այստեղ նկատի ունենք կազմությամբ պարզ բայերի բաղադրիչների՝ արմատի, բայածանցի և բայակերտ ածանցի կից գրությունը:

թե՛ վերլուծական կազմություններ: Հմնտ. նաև հետևյալ ընդգծված բայերը՝
 Խնդայ՝ թե՛ խալսեցայ և այլ մի խօսիլ (ՊՎՄՄ, 102, 267-268) և՝
 Դարձաւ ու ճուղապ երեստ («պատասխանել»)
 - Ես աղոր, դուն ո՞ւր փախել ես (51, 229 - 230):

Հայրեններում և կաֆաներում վերլուծական բայերի համեմատությամբ բավական փոքր թիվ են կազմում արաբերենից փոխառյալ բառ-արմատներով ձևավորված համադրական բայերը: Դրանցից են՝ ըռովկիլ («խռովել», «գժտվել», «հեռանալ», «հրաժարվել»), թարկել («թողնել», «լքել», «հրաժարվել»), խալաթել/խալթել («խալաթ տալ», «ոքնե՛ գգեստ նվիրել», «մեծարել»), խալըսել/խալըսիլ/խալիսել/խըլըսիլ («ազատվել», «փրկվել», «պրծնել», «զերծ մնալ»), խամզել («մատնել»), կղպել/կպղել («կողպել», «փակել»), հինայել («հինա դնել»), դալտել/դալատել/դալատիլ/խալատիլ («սխալվել»), դալտ(ը)նալ/խալտինալ («սխալվել»), դալտեցուցանել/խալտեցուցանել («սխալեցնել»), դահրել («խռովել», «վրդովել», «վշտացնել»), դբբլել («ընդունել», «համաձայնել»), դարիպանալ/խարիպանալ/կարիբանալ («պանդխտանալ»), դառիսիլ («սուզվել»), մապահաթել («գրուցել», «խոսակցել»), մելուլիլ/մելուրիլ/մալուլել («տիրել», «թախծել»), մլքել («տիրել», «գրավել», «իշխել»), նաղշել/նախաշել («նկարել»), պատլել/պաթլել («փչացնել», «նսեմացնել»), սապոնել («օձառել») այլն: Օրինակ՝

Իմ եարն ի տանէն ի դուրս

Զերկոքին լոյսն կու պատլէ (339, 963 - 964):

Ինչպես նկատելի է, բերված համադրական բայերի հիմնական մասը կազմությամբ պարզ է: Բացառություն են կազմում դալ(ա)տել («սխալվել») բային զուգահեռաբար գործածված դալտ(ը)նալ / խալտինալ սոսկածանցավոր, նույն բայից սերված դալտեցուցանել/խալտեցուցանել պառճառական և դարիբանալ / խարիպանալ / կարիբանալ սոսկածանցավոր բայերը:

Բացի նշված սոսկածանցավոր բայերից՝ հայրեններում և կաֆաներում գործածված մյուս բոլոր համադրական բայերը պատկանում են -ե- կամ ի- խոնարհման: Դրանցից մի քանիսը լեզվական աղբյուրներում զուգահեռաբար վկայվել են ե և ի խոնարհիչ ձայնավորներով, ինչպես՝ դալատել/դալատիլ («սխալվել»), խալըսել/խալըսիլ («փրկ(վ)ել»), մելուլել/մելուրիլ («տիրել») և այլն:

Արաբերենից փոխառյալ համադրական բայերի կազմության քննությունը ցույց է տալիս, որ դրանցում հիմնական ձևային դերով գերազանցապես հանդես են գալիս գոյականներ: Դրանցից են՝ թարկ («լքում», «զղջում», «ազատում», «թողություն», «հրաժարում»), հինայ, դալատ («սխալ», «թերություն»), դաբուլ («համաձայնություն»), դարիպ («պանդուխտ», «օտարական»), մապահաթ («գրույց»), մելիք («թագավոր», «տեր»), նաղաշ («նկարիչ») և այլն: Մակավաթիվ բայերի մեջ հիմնական ձևային դեր են կատարել արաբերենից փոխառյալ ածականներ, ինչպես՝

խալիս («մաքուր», «ազատ», «զերծ»), խամազ («մատնիչ»), դարիբ/կարիբ («պանդուխտ», «օտարական») և այլն:

Հայրեններում և կաֆաներում անհամեմատ մեծ թիվ են կազմում արաբերենից փոխառյալ վերլուծական բայերը, որոնցում որպես հարադիրներ գործածվել են արաբերենից փոխառյալ հետևյալ անունները՝ ալաս («փրկում», «ազատում») անել, աճապ / յաճապ / աճեպ / աջեք («զարմանք», «ապշոթյուն») գալ / մնալ, այան - («հայտնի», «բացահայտ») անել, գահալ («թույլ», «ծույլ») կենալ, թաբայ («զոջում», «ապաշխարանք») առնել, թախսիր («մեղք», «հանցանք») առնել, թամաշայ («աղմուկ», «վեճ») առնել, թապտիր / թադբիր / թեպտիր / թատպիր («կարգադրություն», «հրահանգ», «պատրաստություն», «փոփոխություն», «կարգ») առնուլ / ածել / անել / տալ, թասայ («կսկիծ») անել, (զարևու) թարկն/թարկիկն («լքում», «զոջում», «ազատում», «թողություն», «հրաժարում») տալ, իխրար/ըխրար/իրխար/ըրխար («պայման», «խոստում», «որոշում», «երաշխավորություն») առնուլ/առնել/գալ, խալաթ («նվեր») քաշել, խայալ/խայեալ/խիալ («երազ», «ցնորք», «մտածմունք», «կասկած») անել, խապար/խաբար («լուր») առնուլ / տալ / անել, խզմաթ/խզմեթ «ծառայություն» անել, հալալ անել, հալխայ/հալղայ («օղակ») անել, համլայ («հարձակում») կապել, հայրան/հեյրան («ապշած», «հիացած», «զարմացած») լինիմ/մնալ, հասրաթ («կարոտ») լինիմ և այլն:

Բերված փոխառյալ հարադիրների մասնակցությամբ ձևավորված վերլուծական բարդությունների մեջ բայական բաղադրիչի գործառնությունը հանդես են գալիս միմիայն հայերեն բայեր, որոնցից հայրեններում և կաֆաներում գործածվել են՝ աճել, առնել/անել, առնուլ, բերել, բռնել, գալ, գնալ, ելանել, զարկել, ինկնել, լինել, կենալ, մնալ, տալ, քաշել և այլն: Վերջիններս, վերլուծական բայերի կազմությանը մասնակցելով, ըստ էության կատարում են բայակերտ ածանցի դեր՝ դառնալով վերջինիս համանիշը: Ասվածը տպավորիչ է հատկապես հետևյալ համեմատությունների մեջ՝ դըբլել («ընդունել») - խապուլ անել, թարկել («թողնել») - թարկ տալ, մալուլել («տխրել») - մալուլ մնալ և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված բայերը նույնպիսի դեր են կատարում նաև բուն հայերեն բաղադրիչներով վերլուծական բարդությունների կազմության մեջ՝ գրական հայերենի բոլոր շրջաններում ներկայացնելով բառապաշարի ակտիվ շերտի մի մասը: Բերենք մեկական օրինակ գրաբարից և ժամանակակից հայերենից՝ Եւ ակն ածէր ի վերայ նոցա, զի զհւր ինչ զհանդերձս եւ զկերակուր հասարակէր ընդ նոսա¹³, Հե յ, պարոննե ը, ակա նջ արեք թափառական աշուղին¹⁴:

Խառը ճանապարհով ձևավորված վերլուծական բայերի մեծ մասի հարադիրները գերազանցապես արտահայտված են արաբերենից փոխառյալ գոյականների ուղիղ ձևով¹⁵, ինչպես՝ աճապ գալ («զարմանալ»), աջեք մնալ («զարմանալ»), խապուլ անել («համաձայնել»), սատաղայ գնալ

¹³ Փ ա լ ս տ ո ս ի Բ ո լ զ ա ն դ ա ց լ ո յ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 58:

¹⁴ Հ ո վ հ. Թ ո լ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երևան, 1969, էջ 185:

¹⁵ Ուղիղ ձև ասելով՝ նկատի ունենք հինգ հոլովով մոտեցումը:

(«մատաղ լինել»), թարկ տալ («թողնել»), թարկիկ տալ («թողնել»), սալամ տալ («ողջունել»), մուտեհ կենալ («հիանալ»), տնագ առնել («ծաղրել»), մաղպուն լինել («գրկվել»), ճաֆա քաշել («նեղություն քաշել»), տուա անել («աղոթել»), նալէթ անել («անհիծել») և այլն: Օրինակ՝

- Մի՛ քրնիր, գալու՛ մ, մի՛ քրնիր,
Ե՛լ, կանգնե՛, քեզ տէվրա՛ն արայ (93, 25-26):

Ասվածին հակառակ՝ հայրեններում և կաֆաներում չափազանց սակավադեպ են այն վերլուծական բարդությունները, որոնց գոյական հարադիրներն արտահայտված են կա՛մ բացառական հոլովածևով, կա՛մ «թեք հոլովածև - կապ» կաղապարով, ինչպես՝ խաթրեն էլնել («կամքին հակառակ գնալ»), խետ խաթրին էրթալ («կամքով գնալ»), ի յաճապս գալ («գարմանալ») և այլն: Օրինակ՝

Այժո որ խաթրեն էլար՝
Քեռ տնիկ կանի վերան (777, 52 - 53):
Քեանի խետ խաթրին էրթաս՝
Ջանը կանի քեռ ջանին կուրպան (777, 50 - 51):

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, անհրաժեշտության դեպքում հարադիրը կարող է հանդես գալ նաև համապատասխան հոդով: Օրինակ՝

- Քան ըզիս փոքրիկ հաուկ.
Ջիմ ճաֆաս այլ ո՛վ կու քաշե («հոգ տանել») (236, 565-566):

Գոյականներից բացի՝ հայրեններում և կաֆաներում հարադրի գործառույթ են կատարում նաև որոշ փոխառյալ ածականներ, ինչպես՝ այան («հայտնի»), խումար («խենթ»), մալուլ («տխուր») և այլն: Օրինակ՝

Մըրտիկս է մալուլ եղեր,
Ջիր ամեն մըլքեր կու ծախե (137, 169-170):

Հայրենների և կաֆաների ընձեռած լեզվական փաստերի դիտարկումից պարզվում է, որ արաբերենից փոխառյալ բառերի մասնակցությամբ ձևավորված վերլուծական և համադրական որոշ կազմություններ միայնաց հետ ունեն ձևափոխառյալ առնչություններ. կազմում են հոմանիշ, համանիշ կամ հականիշ գույգեր: Դրանցից են՝ թարկ տալ/թարկիկ տալ («թողնել»), հայրան մնալ/աջէպ մնալ («գարմանալ»), դավլ անել/իխրար առնուլ/անել/իխրար գալ («խոստանալ», «ուխտել»), մաղպուն լինել/մահրում մնալ («գրկվել»), դամ քաշել/ճաֆայ քաշել («նեղվել»), խաթրեն էլնել/խետ խաթրին էրթալ և այլն: Հմմտ., օրինակ, հետևյալ ընդգծված բայերը՝

.... Թռուցի, թ՛ի նչ մաղպուն եղայ (266, 23-24) և՝
.... Ու ծոցէտ մահրում մնամ էս (47, 117-118):

.... Ու քաշեր հազար տարու դամ (69, 81-82) և՝
 Զիմ ճաֆաս այլ ո՛վ կու քաշէ (236, 565-566):
 Ալօ որ խաթրէն էլար՝(777, 52 - 53) և՝
 Քեանի խետ խաթրին էրթաս՝(777, 50 - 51) և այլն:

Հայրեններում և կաֆաներում գործածված համադրական և վերլուծական բայերի մի մասը ձևավորվել է համարմատ գոյականների կամ ածականների հենքի վրա՝ միմյանց հետ կազմելով համանիշ գույգեր, ինչպես՝ թարկ տալ – թարկել («թողնել»), դալատ անել – դալ(ա)տել («սխալվել»), դահր քաշել – դահրել («խառվել», «վրդովել», «վշտացնել»), դաբուլ անել – դըբըլել («համաձայնել»), դառիս լինիմ – դառիսել («սուզվել»), մալուլ լինիմ – մելուլիլ («տխրել»), պաթլ անել – պաթլել («փչացնել», «նսեմացնել»), մասլահաթ անել – մասլահաթել («գրուցել») և այլն: Հմմտ.

Սըրտիկս էմալուլ եղեր....(137, 170) և՝
 Մէլիլեր ու ներս է գացեր (42, 112) և այլն:

Խոսքի մեջ բայը կարող է հանդես գալ թե՛ անդեմ և թե՛ դիմավոր ձևերով: Դրանք հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում ունեն քերականական տարբեր դրսևորումներ, և բոլորը չէ, որ փոխանցվել են գրական հայերենի մի փուլից մյուսին, իսկ եթե փոխանցվել են, ապա ոչ բոլորն են մնացել անփոփոխ:

Թեև գրաբարի չորս դերբայների (անորոշ, ներկա, անցյալ, ապառնի) քերականական իմաստներն անփոփոխ ավանդվել են միջին հայերենին, սակայն դրանք արտահայտության պլանում գերազանցապես ենթարկվել են ձևաբանական փոփոխությունների: Ավելին, միջին հայերենում գործածության մեջ են մտել ևս երեք անդեմ բայեր՝ հարակատարը, որը հանդես է բերում երկակի բնույթ՝ կիրառվելով և՛ որպես անկախ դերբայ, և՛ որպես ձևակազմիչ, ժխտականը, որը ձևակազմիչ է, և, այսպես կոչված, համընթացականը, որն անկախ դերբայ է¹⁶:

Անորոշ դերբայի քերականական իմաստը գրաբարում արտահայտվում էր ել, ալ, ուլ (միակ դեպքում՝ ոլ) ձևությամբով: Գ. Ջահուկյանն իրավացիորեն գտնում է, որ միջին գրական հայերենի խոնարհման համակարգում նկատելի է «...լծորդությունների փոխանցման հաճախացումը»¹⁷, թեև այդ գործընթացն սկսվել էր դեռևս գրաբարում¹⁸: Հմմտ.

«Ա՛յ» - եր կանչեմ փարայով,
 Սրտիկս լցուեր է խոցոտ եարայով (739, 67-68) և՝
 Կանչիմ ու այան կանչիմ,
 Ալամէ իսկի չամաչեմ (188, 9-10) և այլն:

¹⁶ Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 301-321, 361-381:

¹⁷ Տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, էջ 46-47:

¹⁸ Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 301:

Միջին հայերենում անորոշ դերբայի կազմությանն սկսում է ակտիվորեն մասնակցել նաև ի խոնարհիչ ձայնավորը: Ավելին՝ եթե գրաբար բնագրերում ի լծորդությամբ ձևավորված բայերը հազվադեպ էին¹⁹ և համարվում էին Ե լծորդ ձայնավորով կազմված անորոշ դերբայների գուգաձևեր, ապա միջին հայերենում ի խոնարհման անորոշ դերբայների գործածությունը դառնում է օրինաչափ²⁰:

Քանի պատրաստիլ ջանա,
Անկուման այնէ քարաբան (923, 31-32):

Հարկ է նշել, սակայն, որ հայրենների և կաֆաների՝ արաբերենից փոխառյալ բայերի շարքում ի լծորդությամբ ձևավորված անորոշ դերբայների կիրառության դեպքեր չեն հանդիպում: Չեն հանդիպում նաև ու խոնարհման փոխառյալ բայեր, իսկ ա խոնարհման դարիպանալ / խարիպանալ / կարիբանալ («պանդիստանալ») և դալտընալ / խալտինալ («սխալվել») սուսկածանցավոր բայերը գործածվում են միայն դիմավոր ձևերով: Օրինակ՝

Երբ բաղնիքէն ուր ելլես,
Ղալտընաս ու մեր տունը գաս (692, 15 - 16):
Մարիկն անիծեց գորդին
- Ի մ որդի, դուն դարիպանաս (342, 1075 - 1076):

Հայրեններում և կաֆաներում Ե խոնահման բայերից անորոշ դերբայական ձևով հիշատակվել է միայն դահրել («վրդովել», «վշտացնել») բայը, որի միակ կիրառությունը մեզ է ավանդվել լ-ր հնչյունափոխությամբ: Օրինակ՝

Զվարդն չեմ կարեր դահրեր,
Հէ՛, ի մ տուն, հէ՛ (574, 49 - 50):

Նկատենք, որ նշված հնչյունափոխությունը միջին հայերենում հատուկ էր ոչ թե անորոշ, այլ վաղակատար դերբայի բառավերջի լ-ին:

Ներկա դերբայի հետ կապված՝ պետք է նշել, որ արաբերենից փոխառյալ բայերի շարքում հանդիպում է խամազ/ղամազ («մատնիչ») գոյականից սերված միակ բայը (ըստ էության՝ բայաձևը), որը հայրեններում վկայված է միայն փոխանվանական կիրառությամբ:

.... Խամզողին տունն աւերի (62, 14 -15):

Միջին հայերենի անդեմ բայերի շարքում տեղ գտած հարակատար դերբայը գրաբարում աչքի էր ընկնում բացառիկ կիրառություններով՝ հանդես գալով, սակայն, թե՛ անկախ և թե՛ ձևակազմիչ դերով: Հմմտ.գօր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն բովանդակութեան²¹

¹⁹ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 131:

²⁰ Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 302:

²¹ Փ ա լ տ ո ս ի Բ ո լ գ ա ն դ ա ց լ ո յ Պատմութիւն Հայոց, էջ 5:

և՛ ...որ ի գործ արության քաջ էր անհնարին, բայց ի գործ իմաստության բախած էր²²:

Հարակատար դերբայի գործառական երկակի վիճակը լիարժեքորեն դրսևորվում է միջին հայերենում, որտեղ այն խոսքի մեջ հաճախակի հանդես է գալիս ոչ միայն *n*-րոշյի [Հարսնուկ մ' Աստծոյ սիրուն, Իւր կպղած («կողպած») դուռն կու բանայ (85, 5 - 6)] և պարագայի [Այնչափ աղաչեմ ըզՔեզ, Որ տեսնում ես զիս իւրլըսած («փրկված») (850, 79 - 80)] դերով, այլև մասնակցում է բայի խոնարհման համակարգին՝ կազմելով վերլուծական ժամանակային ձևեր:

Փաստական նյութերը վկայում են, որ հայրեններում և կաֆաներում գործածված արաբերեն փոխառյալ բայերից քչերն են (Խըլըսել, կպղել/կողպել, հինայել, նախաշել) գործածվել -ած դերբայական վերջավորությամբ՝ լրացնելով միջին հայերենի բառապաշարը խառը ճանապարհով հարստացնող բայերի անդամ ձևերի հարացույցը: Օրինակ՝

Ուղտն ալ իշուկէն ի վար
Իր խելառ ոտուին հինայած (59, 199-200):
Օ իս, իմ պարո ն, էյնեկ,
Ու իւրնձոր նախաշած (551, 5-6):

Միջին հայերենում իր ձևաբանական դրսևորումներով և բաղադրյալ ժամանակաձևերի կազմությամբ ամենահարուստը ապառնի (ապակատար) դերբայն է²³, որն արտահայտվում է «բայի երրորդ հիմք + -ոց, -ի, -ոյ կամ -ու բառահարաբերական ձևույթ» կաղապարով: Նշված առաջին երեք վերջավորությունները ժառանգվել են գրաբարից²⁴, իսկ վերջինը միջին հայերենում տեղի ունեցած ոյ-ու ընդհանուր-պատմական հնչյունափոխության հետևանք է: Նրանով ձևավորված ապառնի դերբայը ձևակազմիչ է. նկատենք, սակայն, որ ապակատար ներկա ժամանակաձևը հայրեններում հազվադեպ է կիրառվում, այն էլ՝ ոչ արաբերենից փոխառյալ բայերի մասնակցությամբ.

Նստաւ ու սէվտան ինկաւ,
Մոռցաւ ՝ ի նչ բան խօսելու (639, 5-6):

Միջին հայերենում գրաբարի անցյալ դերբայը ենթարկվում է հնչյունափոխության (տեղի է ունենում եա երկբարբառի վերածում ե պարզ ձայնավորի), որի արդյունքում ձևավորվում է վաղակատար դերբայը²⁵:

²² Նույն տեղում, էջ 117:

²³ Տե՛ս Ալնարկներ..., հ. Ա, էջ 327:

²⁴ Լեզվական այս փաստն առաջինը նկատել է Ա. Աբրահամյանը (տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 148-149):

²⁵ Լեզվական աղբյուրները վկայում են, որ անցյալ դերբայը միջին հայերենում միաժամանակ գործածվել է վաղակատարին զուգահեռ՝ հետագայում գերազանցապես վերածվելով ածականի, բացառիկ դեպքերում՝ գոյականի (մեռել, սառալել և այլն):

Վերջինս, միջին հայերենից սկսած, հանդես է գալիս միայն ձևակազմիչ դերով²⁶: Օրինակ՝

Ղամազ է ի յօձ նրման,

Որ զԱդամ է դալտեցուցեր («սխալեցրել») (232, 401 - 402):

Համլայ կապեր («հարձակվել») դարտակ դառնայր (ՊՎՄԱ, 129, 751):

Ի տարբերություն միջին հայերենի բնիկ բայերի՝ արաբերենից փոխառյալ որևէ բայ հայրեններում և կաֆաներում անկատար, համակատար ու համընթացական դերբայական ձևերով չի գործածվել:

Հայրենների և կաֆաների բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ այն հարստացել է նաև խառը ճանապարհով՝ արաբերենից փոխառյալ բառերի ու միջին հայերենի բառակազմական միջոցների համադրման կամ հարադրման եղանակներով ձևավորված բայերով, որոնցից համադրականները կազմությամբ գերազանցապես պարզ են և պատկանում են Ե կամ Ի, իսկ սոսկածանցավորները՝ ա խոնարհման: Վերլուծական բայերի մեծ մասի հարադիրներն արտահայտված են արաբերենից փոխառյալ գոյականների ուղիղ ձևերով, հազվադեպ՝ բացառականով, կապական կապակցությամբ կամ ածականով: Լինելով նորաբանություններ՝ նշված տիպի բայերը որոշակի պատկերացում են տալիս միջին հայերենի բայակազմական գործընթացների մասին: Համեմատաբար ակտիվ կիրառություն ունի ձևակազմիչ դերով հանդես եկող վաղակատար դերբայը, մյուսները կա՛մ սակավադեպ են, կա՛մ չեն գործածվել:

МОРФОЛОГО - СЕМАНТИЧЕСКИЕ ФОРМЫ ГЛАГОЛОВ, ОБРАЗОВАННЫХ НА ОСНОВЕ АРАБСКИХ ЗАИМСТВОВАНИЙ В АЙРЕНАХ И КАФАХ

ՄԴԵՐ ԽԱՇԱՏՐՅԱՆ

Р е з ю м е

Анализ словарного состава айренов и кафов свидетельствует о том, что он пополнялся разными путями, в частности, за счет глаголов, образованных на основе арабских заимствований с помощью присоединения словообразовательных аффиксов, присущих среднеармянскому языку, а также с помощью составных глаголов. Первый тип (аналитический) составляют преимущественно простые глаголы, и они спрягаются по типу спряжения с основой на « или 3, а второй тип представлен глаголами с основой спряжения на 3. Большая часть аналитических глаголов образована на основе заимствованных из арабского языка существительных в именительном падеже и в редких случаях – прилагательных или существительных в творительном падеже. Данные новообразования

²⁶ Տե՛ս Աղնարիկներ..., հ. Ա, էջ 307-308:

дают возможность представить процесс словообразования глаголов в среднеармянском языке. Большая активность при функционировании отличается у плюсквамперфекта, а остальные глагольные формы или редки, или же практически не встречаются.

THE MORPHOLOGICAL AND SEMANTIC MANIFESTATIONS
OF THE VERBS FORMED BY MEANS OF ARABIC BORROWINGS
IN HAYRENS AND KAFAS

MHER KHACHATRYAN

S u m m a r y

The study of the vocabulary of hayrens and kafas indicates that the vocabulary has also been replenished in mixed ways by means of Arabic borrowings and verbs formed as a result of synthetic and analytical types of word-formation in Middle Armenian. Among those verbs the synthetic ones are mainly simple and belong to either **h** or **h** declension, and the derivative ones belong to **u** declension. The juxtaposition of most analytical verbs is expressed by nominal, rarely ablative nouns borrowed from Arabic, as well as by prepositional constructions or adjectives. Being neologisms the above-mentioned verb types provide a general picture of the word-formational process in Middle Armenian. Having a formational role the Past Participle is of comparatively common usage others being either rare or unused.